

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Համընդհանուր առողջապահական ծածկույթի ծրագրի իրականացում» վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**



Վարկային համաձայնագիր

(Համընդհանուր առողջապահական ծածկույթի ծրագրի իրականացում)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ

Միջև

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ստորագրման ամսաթվով թվագրված ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) եւ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ (Բանկ) միջեւ: Վարկառուն եւ Բանկը սույնով համաձայնում են հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.01. Ընդհանուր պայմանները (ինչպես սահմանված է սույն Համաձայնագրի Հավելվածում) կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

1.02. Եթե համատեքստով այլ բան չի պահանջվում, ապա սույն Համաձայնագրում օգտագործված մեծատառ եզրույթներն ունեն Ընդհանուր պայմաններում կամ սույն Համաձայնագրի Հավելվածում դրանց վերագրված նշանակությունները:

ՀՈԴՎԱԾ II. ՎԱՐԿԸ

2.01. Բանկը համաձայնում է Վարկառուին տրամադրել հարյուր երկու միլիոն եվրո (102,000,000 եվրո) գումարի չափով վարկ, որն Արժույթի փոխարկման միջոցով (Վարկ) կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել՝ սույն Համաձայնագրի 1-ին առդիրում նկարագրված ծրագիրը (Ծրագիր) ֆինանսավորելու համար:

2.02. Վարկառուն կարող է վարկային միջոցներն առհանել սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի IV բաժնին համապատասխան: Վարկային հաշվից բոլոր առհանումները Բանկի կողմից փոխանցվում են Վարկառուի կողմից նշված եւ Բանկի համար ընդունելի հաշվին:

2.03. Միանվագ կոմիսիոն վճարը կազմում է Վարկի գումարի մեկ տոկոսի մեկ քառորդը (0.25%):

2.04. Պարտավորավճարը կազմում է Չառհանված վարկի մնացորդի տարեկան մեկ տոկոսի մեկ քառորդը (0.25%):

2.05. Տոկոսադրույքը Կողմնորոշիչ տոկոսադրույքն է՝ գումարած Լողացող սպրեդը կամ այնպիսի տոկոսադրույք, որը կարող է կիրառվել Փոխարկումից հետո՝ Ընդհանուր պայմանների 3.02 բաժնի «ե» կետի համաձայն:

2.06. Վճարման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ը եւ հուլիսի 15-ը:

2.07. Վարկի մայր գումարը մարվում է սույն Համաձայնագրի 3-րդ առդիրի համաձայն:

ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳԻՐԸ

3.01. Վարկառուն հայտարարում է Ծրագրի նպատակների իրականացման առնչությամբ իր հանձնառության մասին: Այդ նպատակով Վարկառուն Ծրագիրն իրականացնում է ԱՆ-ի միջոցով՝ Ընդհանուր պայմանների V հոդվածի եւ սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի դրույթներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ IV. ԲԱՆԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

4.01. Կասեցման լրացուցիչ դեպք է մասնավորապես հետեւյալը. Ծրագիրը փոփոխվել եւ (կամ) կասեցվել է այնպես, որ Բանկի կարծիքով՝ կարող է էական եւ բացասական ազդեցություն ունենալ Ծրագրի նպատակներն ապահովելու Վարկառուի կարողության վրա:

4.02. Արագացման լրացուցիչ դեպք է մասնավորապես հետեւյալը. տեղի է ունենում սույն Համաձայնագրի 4.01 բաժնում նշված որեւէ դեպք, եւ Բանկի

կողմից Վարկառուին դեպքի մասին ծանուցելուց հետո վաթսուն (60) օր դա շարունակվում է:

ՀՈԴՎԱԾ V. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

5.01. Ուժի մեջ մտնելու լրացուցիչ պայման է մասնավորապես հետեւյալը. ԱՆ-ն ընդունել է Բանկի համար ընդունելի՝ Ծրագրի գործառության ձեռնարկը:

5.02. Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը սույն Համաձայնագրի ստորագրման ամսաթվին հաջորդող հարյուր ութսուներորդ (180) օրն է:

ՀՈԴՎԱԾ VI. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ, ՀԱՍՑԵՆԵՐԸ

6.01. Վարկառուի ներկայացուցիչը դրա Ֆինանսների նախարարն է:

6.02. Վարկառուի հասցեն է՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն

Մելիք-Ադամյան փողոց 1

Երեւան, 0010,

Հայաստանի Հանրապետություն

Ֆաքսիմիլ՝

+ 374-11-800132

6.03. Բանկի հասցեն է՝

Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկ

Էյչ փողոց 1818, Հյուսիսարեւմտյան

Վաշինգտոն, Կ.Շ., 20433

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Տելեքս՝ Ֆաքսիմիլ՝

248423(MCI) կամ 1-202-477-6391

64145 (MCI)

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ է ստորագրման ամսաթվի դրությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հարգարժան Վահե Հովհաննիսյանի կողմից

Լիազոր ներկայացուցիչ

Անուն՝ Վահե Հովհաննիսյան

Պաշտոն՝ Ֆինանսների նախարար

Ամսաթիվ՝ 2024 թվականի հուլիսի 25

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿ

Կարողին Գեգինատի կողմից

Լիազոր ներկայացուցիչ

Անուն՝ Կարողին Գեգինատ

Պաշտոն՝ ՀԲ Հայաստանի գրասենյակի տնօրեն

Ամսաթիվ՝ 2024 թվականի հուլիսի 25

ԱՌԴԻՐ 1

Ծրագրի նկարագրությունը

Ծրագրի նպատակներն են առաջնային բժշկական օգնության որակի եւ դրանից օգտվելու գործընթացի բարելավումը, Վարկառուի առողջապահական ծախսերի արդյունավետության բարձրացումը եւ առողջապահական ծառայությունների հասանելիության ֆինանսական խոչընդոտների նվազեցումը:

Ծրագիրը բաղկացած է հետեւյալ ընտրված գործողությունների ամբողջությունից, որոնք խմբավորված են ըստ ստորեւ նշված արդյունքների ոլորտների.

Արդյունքների ոլորտ 1. Բժշկական օգնության որակի բարելավումը

Առաջնային բժշկական օգնության ծառայությունների որակի բարելավում՝ Հայաստանում հիվանդությունների բեռի ամենաբարձր մակարդակն ունեցող հիմնական ՈՎՀ-ները կանխարգելելու, հայտնաբերելու եւ վերահսկելու համար՝ ծառայությունների մատուցման բարեփոխումների միջոցով, այդ թվում, *ի թիվս այլնի՝* i) Առաջնային բժշկական օգնություն տրամադրող հաստատություններում սպասարկման ընթացիկ մոդելի կարգավորում, ii) Առաջնային եւ երկրորդային բժշկական օգնության մակարդակներում ընտրված ՈՎՀ-ների համար բժշկական օգնության բուժակարգերի մշակում եւ իրականացում՝ համակարգված եւ բարձրորակ բժշկական օգնության եւ ուղղորդման գործուն համակարգը խթանելու նպատակով, iii) Կատարողականի վրա հիմնված պայմանագրերի իրականացում, որոնք ներառում են որակի ցուցանիշներ՝ ի լրումն քանակի/ընդգրկման ցուցանիշների եւ ճշգրտված ֆինանսական խրախուսական գումարների՝ գնաճը հաշվի առնելու եւ պահանջվող ջանքերի ծավալն արտացոլելու նպատակով, եւ iv) բուժաշխատողների շարունակական մասնագիտական զարգացման եւ հավաստագրման համակարգի մշակում եւ իրագործում:

Արդյունքների ոլորտ 2. Վարկառուի առողջապահական ծախսերի արդյունավետության բարձրացումը

Վարկառուի առողջապահական ծախսերի արդյունավետության բարձրացում՝ անդրադառնալով կրիտիկական ծախսային բաղադրիչներին, մասնավորապես՝ դեղագործական արտադրանքի համար կատարվող մեծ ծախսերին՝ բարեփոխումների միջոցառումների միջոցով, այդ թվում, *ի թիվս այլնի՝* i) հենանշային գնագոյացման ներդրում եւ իրականացում եւ էլեկտրոնային դեղատոմսերի կիրառման ապահովում, եւ ii) առողջապահական տեղեկատվական համակարգերի բարելավման հետ մեկտեղ այս բարեփոխումներն իրականացնելու համար ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում՝ մշտադիտարկումն ու կատարումն ուժեղացնելու նպատակով:

Արդյունքների ոլորտ 3. Առողջապահական ծառայությունների հասանելիության ֆինանսական խոչընդոտների նվազեցումը

Բարեփոխումների միջոցառումների իրականացում, այդ թվում, *ի թիվս այլնի՝* i) ԱՀԱ Ծրագրի բյուջետային տողի համար պետական ֆինանսավորման ավելացում, ii) գործառական եւ կառավարման հիմքերի ստեղծում՝ պետական գնումների անկախ կազմակերպության եւ դրա կառավարման խորհրդի ստեղծման միջոցով՝ ԱՀԱ-ի համար հատկացվող միջոցների գործուն եւ արդյունավետ կառավարումը եւ առողջապահական ծառայությունների ռազմավարական գնման գործընթացը դյուրացնելու համար, եւ iii) առողջապահական արտոնությունների փաթեթի արժեքի եւ վերանայման գնահատման գործիքի մշակում:

ԱՌԴԻՐ 2

Ծրագրի իրականացումը

Բաժին I. Իրականացման հետ կապված միջոցառումները

Ա. Ծրագրի հետ կապված կառույցները

1. Վարկառուն՝

ա) Ծրագրի իրականացման ընդհանուր պատասխանատվությունը վերապահում է Առողջապահության նախարարությանը (ԱՆ),

բ) ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո ոչ ուշ, քան մեկ (1) ամսվա ընթացքում ստեղծում եւ այնուհետեւ Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում պահում է Բանկի համար ընդունելի լիազորություններով, կազմով եւ ռեսուրսներով Տեխնիկական աշխատանքային խումբ, որը պատասխանատու կլինի Ծրագիրը համակարգելու եւ Ծրագրի իրականացումը դյուրացնելու համար, եւ

գ) ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո ոչ ուշ, քան մեկ (1) ամսվա ընթացքում (եթե Բանկի եւ Վարկառուի միջեւ այլ համաձայնություն ձեռք չի բերվել), Կառավարության որոշմամբ Ծրագրի իրականացման պատասխանատու է նշանակում Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակին (ԱԾԻԳ) եւ Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում ապահովում է դրա գործունեությունը, որը կունենա բավարար աշխատակազմ ու ռեսուրսներ, կգործի Բանկի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքի համաձայն, պատասխանատու կլինի Ծրագրին առնչվող գործողությունների ամենօրյա համակարգումն իրականացնելու համար:

2. Վարկառուն ապահովում է, որ ոչ մի Մասնակից տարածաշրջան իրավունակ չլինի Վարկային միջոցներից ֆինանսավորվելու համար, քանի դեռ եւ եթե Վարկառուն ԱՆ-ի միջոցով յուրաքանչյուր Մասնակից տարածաշրջանի հետ

չի կնքել Բանկի համար ընդունելի՝ Մասնակցության մասին համաձայնագիր՝ իր իրավագործության տարածքում Ծրագիրն իրականացնելու պարտավորությունը կատարելու նպատակով Մասնակից տարածաշրջանի համար Ծրագրով նախատեսված հատուկ պահանջներ սահմանելու համար:

Բ. Ծրագրի գործառության ձեռնարկը

1. Վարկառուն ԱՆ-ի միջոցով ընդունում է Բանկի համար ընդունելի՝ Ծրագրի գործառության ձեռնարկ եւ այնուհետեւ ապահովում է, որ Ծրագիրն իրականացվի համաձայն այդ ձեռնարկի, որով սահմանվում են Ծրագրի իրականացման համար ինստիտուցիոնալ, վարչարարական, ֆինանսական, տեխնիկական եւ գործառական ուղեցույցները եւ ընթացակարգերը, ինչպես նաեւ համաձայնեցված Ծրագրի գործողությունների պլանը, այդ թվում, ի թիվս այլնի՝

ա) Ծրագրի գործողությունների եւ մանրամասն Ծրագրային ծախսերի սահմանումը,

բ) Ծրագրի բնապահպանական եւ սոցիալական ռիսկերի նվազեցման միջոցառումներն ու փաստաթղթերը,

գ) Ծրագրի համար կիրառելի ֆինանսական կառավարման, աուդիտի եւ գնումների ընթացակարգերն ու չափորոշիչները,

դ) Հակակոռուպցիոն ուղեցույցներին համապատասխանության վերաբերյալ ընթացակարգերը,

ե) Բանկի հետ համաձայնեցված՝ Ստուգման ընթացակարգերը՝ ՄԿՑ-ների եւ դրանց համապատասխան ՄԿԱ-ների ձեռքբերումը գնահատելու համար,

զ) Ծրագրին առնչվող բողոքների մեխանիզմը, ինչպես նաեւ դրա հետ կապված գործելակարգերը եւ ընթացակարգերը՝ բողոքները հասցեագրելու եւ դրանց մասին հայտնելու համար,

է) մշտադիտարկման եւ գնահատման պահանջները, այդ թվում՝ Ծրագրի

ստուգման համակարգերը, եւ

ը) ցանկացած այլ տեխնիկական եւ կազմակերպական միջոցառում եւ ընթացակարգ, որոնք կպահանջվեն Ծրագրի համար:

2. Վարկառուն զգալիորեն եւ (կամ) էականորեն չի փոփոխում, վերանայում, հրաժարվում, չեղարկում կամ կասեցնում Ծրագրի գործառության ձեռնարկի որեւէ դրույթ՝ առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության:

3. Ծրագրի գործառության ձեռնարկի դրույթների եւ սույն Համաձայնագրի դրույթների միջեւ հակասությունների դեպքում գերակայում են սույն Համաձայնագրի դրույթները:

Գ. Անկախ ստուգող մարմինը

1. Վարկառուն՝

ա) ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո ոչ ուշ, քան վեց (6) ամսվա ընթացքում նշանակում եւ այնուհետեւ Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում պահում է փորձառություն եւ որակավորում ունեցող անկախ ստուգող մարմին, որը գործում է Բանկի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքի համաձայն (Անկախ ստուգող մարմին), եւ որը պետք է՝ i) իրականացնի ՄԿՑ-ների/ՄԿԱ-ների ձեռքբերման ստուգումը սույն Առդիրի IV Ա.2 բաժնի աղյուսակում սահմանված կարգով, եւ ii) առաջարկի համապատասխան մասհանումներ, որոնք կիրառելիության դեպքում պետք է կատարվեն այդ բաժնի համաձայն, եւ

բ) i) ապահովի, որ Անկախ ստուգող մարմինը ՄԿՑ-ների/ՄԿԱ-ների ստուգման գործընթացը (գործընթացները) իրականացնի Ստուգման ընթացակարգերին համապատասխան, եւ ii) ժամանակին ու Բանկին բավարարող ձեւով ու բովանդակությամբ համապատասխան ստուգման հաշվետվությունները ներկայացնի Բանկ:

Դ. Ծրագրի գործողությունների պլանը

1. Ծրագիրն իրականացնելու նպատակով Վարկառուն՝ ա) իրականացնում է Բանկի հետ համաձայնեցված Ծրագրի գործողությունների պլանը՝ նշված Ծրագրի գործողությունների պլանով սահմանված ժամանակացույցի համաձայն, ինչպես նաև Բանկին բավարարող ձեռով ու բովանդակությամբ, եւ բ) վարում է այնպիսի քաղաքականություններ եւ ընթացակարգեր, որոնք հնարավորություն կտան Բանկին բավարարող ձեռով եւ բովանդակությամբ վերահսկելու եւ գնահատելու նշված Ծրագրի գործողությունների պլանի իրականացումը:

2. Վարկառուն զգալիորեն եւ (կամ) էականորեն չի փոփոխում, վերանայում, հրաժարվում, չեղարկում կամ կասեցնում Ծրագրի գործողությունների պլանի որեւէ դրույթ՝ առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության:

3. Ծրագրի գործողությունների պլանի դրույթների եւ սույն Համաձայնագրի դրույթների միջեւ հակասությունների դեպքում գերակայում են սույն Համաձայնագրի դրույթները:

Բաժին II. Բացառված գործողությունները

Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի շրջանակներում բացառվի ցանկացած գործողություն, որը՝

1. Բանկի կարծիքով՝ կարող է ունենալ էական բացասական ազդեցություններ, որոնք շրջակա միջավայրի եւ (կամ) ազդակիր մարդկանց համար զգայուն, բազմազան կամ աննախադեպ են, կամ

2. ներառում է հետեւյալ գնումները՝ ա) աշխատանքներ, որոնց արժեքը գնահատվում է յոթանասունհինգ միլիոն դոլարին (75,000,000 դոլար) համարժեք գումար կամ ավելի՝ մեկ պայմանագրի համար, բ) ապրանքներ, որոնց արժեքը գնահատվում է հիսուն միլիոն դոլարին (50,000,000 դոլար) համարժեք գումար

կամ ավելի՝ մեկ պայմանագրի համար, գ) ոչ խորհրդատվական ծառայություններ, որոնց արժեքը գնահատվում է հիսուն միլիոն դոլարին (50,000,000 դոլար) համարժեք գումար կամ ավելի՝ մեկ պայմանագրի համար, կամ դ) խորհրդատուների ծառայություններ, որոնց արժեքը գնահատվում է քսան միլիոն դոլարին (20,000,000 դոլար) համարժեք գումար կամ ավելի՝ մեկ պայմանագրի համար:

Բաժին III. Ծրագրի մշտադիտարկումը, հաշվետվությունների ներկայացումը եւ գնահատումը: Աուդիտները

Ծրագրի հաշվետվությունները

Վարկառուն Ծրագրի՝ օրացուցային կիսամյակն ընդգրկող յուրաքանչյուր հաշվետվություն Բանկին է տրամադրում յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից ոչ ուշ, քան մեկ ամիս հետո:

Բաժին IV. Վարկային միջոցների առհանումը

Ա. Ընդհանուր դրույթներ

1. Չսահմանափակելով Ընդհանուր պայմանների II հոդվածի դրույթները եւ Մասհանման եւ ֆինանսական տեղեկությունների մասին գրության համաձայն՝ Վարկառուն կարող է առհանել Վարկային միջոցները՝ ա) ֆինանսավորելու Ծրագրային ծախսերը (ներառյալ՝ Հարկերը)՝ հիմնվելով Վարկառուի կողմից ձեռքբերված արդյունքների (Մասհանումների հետ կապված արդյունքներ կամ ՄԿԱ-ներ) վրա, որոնք չափվում են հատուկ ցուցանիշներով (Մասհանումների հետ կապված ցուցանիշներ կամ ՄԿՑ-ներ), եւ բ) վճարելու Միանվագ կոմիսիոն վճարը, բոլորը, ինչպես նշված է սույն Ա մասի 2-րդ կետի աղյուսակում:

3. Հետեւյալ աղյուսակում առանձնացվում են Վարկային միջոցների առհանման յուրաքանչյուր կատեգորիա (այդ թվում՝ Մասհանումների հետ

կապված ցուցանիշները, եթե կիրառելի է) (Կատեգորիա), յուրաքանչյուր Կատեգորիայի համար Մասհանումների հետ կապված արդյունքները (եթե կիրառելի է) եւ յուրաքանչյուր Կատեգորիայի համար Վարկի գումարների հատկացումը:

Կատեգորիա (այդ թվում՝ Մասհանումների հետ կապված ցուցանիշը, եթե կիրառելի է)	Մասհանումների հետ կապված արդյունք (եթե կիրառելի է)	Վարկի հատկացված գումար (արտահայտված եվրոյով)	Մասհանումների հաշվարկների բանաձև (եթե կիրառելի է)
1) ՄԿՑ#1՝ Կատարողականի վրա հիմնված պայմանագրեր, որոնք իրականացվում են առաջնային բժշկական օգնության եւ հիվանդանոցային ծառայությունների որակը բարելավելու համար	ՄԿԱ 1.1՝ Առաջնային բժշկական օգնություն տրամադրող կենտրոնների եւ հիվանդանոցների տոկոսը, որոնք կնքել են Կատարողականի վրա հիմնված պայմանագրեր՝ ծառայությունների որակը բարելավելու համար ՄԿԱ 1.2՝ Առաջնային բժշկական օգնություն տրամադրող կենտրոնների եւ հիվանդանոցների տոկոսը, որոնք կատարողականի վրա հիմնված վճարումներ են ստացել Կատարողականի վրա հիմնված՝ կնքված պայմանագրերի հիման վրա:	4,640,000 9,270,000	ՄԿԱ 1.1՝ 2,320,000 եվրո՝ 25%-ի հասնելուց հետո, եւ այնուհետեւ 93,000 եվրո՝ ձեռք բերված յուրաքանչյուր տոկոսային կետի համար՝ մինչեւ 4,640,000 եվրոյի չափով ամբողջական հատկացումը ՄԿԱ 1.2՝ 4,640,000 եվրո՝ 50%-ի հասնելուց հետո, եւ այնուհետեւ 232,000 եվրո՝ ձեռքբերված յուրաքանչյուր տոկոսային կետի համար՝ մինչեւ 9,270,000 եվրոյի չափով ամբողջական հատկացումը
2) ՄԿՑ#2՝ Առաջնային բժշկական օգնություն տրամադրող կենտրոններում բուժքույրերի եւ ընտանեկան բժիշկների կոմպետենտությունը բարելավվել է աշխատանքային վերապատրաստման թարմացված ծրագրի հիման վրա	ՄԿԱ 2.1՝ ԱՆ-ն ընդունել է Բուժքույրերի եւ ընտանեկան բժիշկների համար աշխատանքային ծրագիր՝ հիմնվելով ընտրված ՈՎՀ-ների նոր կլինիկական բուժակարգերի վրա ՄԿԱ 2.2. Առաջնային բժշկական օգնություն տրամադրող հաստատություններում այն բուժքույրերի եւ ընտանեկան բժիշկների	2,320,000 4,640,000	ՄԿԱ 2.1՝ 2,320,000 եվրո՝ ձեռքբերման ժամանակ ՄԿԱ 2.2՝ 2,320,000 եվրո՝ 25%-ի հասնելուց հետո, եւ այնուհետեւ 93,000 եվրո՝ ձեռքբերված յուրաքանչյուր

Կատեգորիա (այդ թվում՝ Մասհանումների հետ կապված ցուցանիշը, եթե կիրառելի է)	Մասհանումների հետ կապված արդյունք (եթե կիրառելի է)	Վարկի հատկացված գումար (արտահայտված եվրոյով)	Մասհանումների հաշվարկների բանաձև (եթե կիրառելի է)
	տոկոսը, որոնք վերապատրաստվել են աշխատանքային թարմացված ծրագրի հիման վրա: ՄԿԱ 2.3՝ 2-րդ տիպի շաքարային դիաբետի դեպքերի տոկոսը, որոնք ախտորոշվում եւ կլինիկական բուժակարգերով բուժվում են Առաջնային բժշկական օգնություն տրամադրող այն կենտրոնների կողմից, որոնք աշխատանքային վերապատրաստում են անցել թարմացված ծրագրով	9,270,000	տոկոսային կետի համար՝ մինչեւ 4,640,000 եվրոյի չափով ամբողջական հատկացումը: ՄԿԱ 2.3՝ 4,640,000 եվրո՝ 50%-ի հասնելուց հետո, եւ այնուհետեւ 464,000 եվրո՝ ձեռքբերված յուրաքանչյուր տոկոսային կետի համար՝ մինչեւ 9,270,000 եվրոյի չափով ամբողջական հատկացումը
3) ՄԿՑ#3՝ Հիվանդանոցային ստացիոնար եւ ամբուլատոր բժշկական օգնությունը կրճատվել է ընտրված ՈՎՀ- ների համար ամբուլատոր բժշկական օգնության վատթար պայմանների պատճառով	ՄԿԱ 3.1՝ ԱՆ-ն ընդունել է կլինիկական բուժակարգեր, որոնցով սահմանվում է ընտրված ՈՎՀ-ների համար Առաջնային բժշկական օգնություն տրամադրող կենտրոնների եւ հիվանդանոցային մակարդակներով տրամադրվող բժշկական օգնությունը ՄԿԱ 3.2՝ 35-68 տարիքային խմբի ապահովագրված անձանց տոկոսը, որոնք Առաջնային բժշկական օգնություն տրամադրող հաստատություններ են այցելել կանխարգելիչ նպատակներով ՄԿԱ 3.3՝ Ընտրված ՈՎՀ- ների համար ամբուլատոր վատթար պայմանների պատճառով	4,640,000 9,270,000 4,640,000	ՄԿԱ 3.1՝ Ամբողջությամբ վճարվել է ձեռքբերման ժամանակ ՄԿԱ 3. 2՝ 4,640,000 եվրո՝ 25%-ի հասնելուց հետո, եւ այնուհետեւ 186,000 եվրո՝ ձեռքբերված յուրաքանչյուր տոկոսային կետի համար՝ մինչեւ 9,270,000 եվրոյի չափով ամբողջական հատկացումը ՄԿԱ 3.3՝ 1,400,000 եվրո՝ Ելակետային ցուցանիշների հետ համեմատած՝ 3%-ի հասնելուց հետո, եւ այնուհետեւ 464,000 եվրո՝ մեկ տոկոսային կետով նվազման համար՝ համեմատած Ելակետային ցուցանիշների հետ, մինչեւ

[illegible]

Կատեգորիա (այդ թվում՝ Մասհանումների հետ կապված ցուցանիշը, եթե կիրառելի է)	Մասհանումների հետ կապված արդյունք (եթե կիրառելի է)	Վարկի հատկացված գումար (արտահայտված եվրոյով)	Մասհանումների հաշվարկների բանաձև (եթե կիրառելի է)
	առաջին եռամսյակի հաշվետվությունը, որը, <i>ի թիվս այլնի</i>, ներառում է ՊԳԱԿ-ի գործունեությունը եւ ֆինանսական ցուցանիշները ՄԿԱ 5.2՝ Անկախ աուդիտորը հրապարակել է դրական եզրակացություն՝ ՊԳԱԿ- ի կատարողականի եւ ֆինանսական աուդիտից հետո ՄԿԱ 5.3՝ ՊԳԱԿ-ի չնախատեսված ծախսերի պահուստի եւ ընդհանուր միջին տարեկան ծախսերի հարաբերակցությունը պահպանվում է առնվազն 2%-ի մակարդակում	4,640,000	վճարվել է ձեռքբերման ժամանակ ՄԿԱ 5.3՝ Ամբողջությամբ վճարվել է ձեռքբերման ժամանակ
6) ՄԿՑ#6. Որպես ընթացիկ առողջապահական ծախսերի համամասնություն՝ ՍՄՀԿԾ վճարումների մասնաբաժինը նվազել է	ՄԿԱ 6.1՝ ՖՆ-ն ներառել է բյուջետային տող ԱՀԱ Ծրագրի համար ՄԿԱ 6.2՝ Մինչեւ 2025թ. դեկտեմբերի 31-ը Վարկառուն հաստատել է՝ ա) «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի նախագիծը, եւ բ) դրան առնչվող ենթաօրենսդրական ակտերը ՄԿԱ 6.3՝ ՖՆ-ն մասհանել է ԱՀԱ Ծրագրի համար հաստատված բյուջեն՝ հիմնվելով	4,640,000 2,330,000 6,665,000 9,270,000	ՄԿԱ 6.1՝ Ամբողջությամբ վճարվել է ձեռքբերման ժամանակ ՄԿԱ 6.2՝ Ամբողջությամբ վճարվել է ձեռքբերման ժամանակ ՄԿԱ 6.3՝ Ամբողջությամբ վճարվել է ձեռքբերման ժամանակ ՄԿԱ 6.4՝ 2,790,000 եվրո՝ Ելակետային ցուցանիշի հետ

Կատեգորիա (այդ թվում՝ Մասհանումների հետ կապված ցուցանիշը, եթե կիրառելի է)	Մասհանումների հետ կապված արդյունք (եթե կիրառելի է)	Վարկի հատկացված գումար (արտահայտված Եվրոյով)	Մասհանումների հաշվարկների բանաձև (եթե կիրառելի է)
	Կառավարության կողմից հաստատված՝ միջոցների հատկացման բանաձևի վրա՝ թիրախային խմբերի համար ծախսարդյունավետ արտոնությունների փաթեթը ծածկելու նպատակով ՄԿԱ 6.4՝ Ընթացիկ առողջապահական ծախսերի համար ՍՄՀԿԾ-ի տոկոսի նվազում է դիտվել՝ Ելակետային ցուցանիշի հետ համեմատած		համեմատած՝ 5%-ի հասնելուց իետո, եւ այնուհետեւ 650,000 Եվրո՝ մեկ տոկոսային կետով նվազման համար՝ համեմատած Ելակետային ցուցանիշի հետ, մինչեւ 9,270,000 Եվրոյի չափով ամբողջական հատկացումը Ելակետային ցուցանիշը՝ 81,4 տոկոս
7) Միանվագ կոմիսիոն վճարը պետք է վճարվի՝ սույն Համաձայնագրի 2.03 բաժնի համաձայն՝ Ընդհանուր պայմանների 2.05 բաժնի «բ» կետին համապատասխան		255,000	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		102,000,000	

Բ. Առհանման պայմանները, Առհանման ժամանակահատվածը

1. Չհակասելով սույն Բաժնի Ա մասի դրույթներին՝ որեւէ առհանում չի կատարվում՝

ա) Նախքան Ստորագրման ամսաթիվը ձեռք բերված ՄԿԱ-ների հիման վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մինչեւ չորս միլիոն վեց հարյուր քառասուն հազար Եվրոն (4,640,000 Եվրո) չգերազանցող ընդհանուր գումարի առհանումները կարող են կատարվել մինչեւ այս ամսաթիվը, սակայն 2023 թվականի դեկտեմբերի 7-ին կամ դրանից հետո ձեռք բերված 6.1-ի ՄԿԱ-ների հիման վրա, եւ

բ) որեւէ ՄԿԱ-ի մասով, քանի դեռ եւ եթե Վարկառուն չի ներկայացրել Բանկին բավարարող ապացույցներ առ այն, որ վերոհիշյալ աղյուսակում նշված ՄԿԱ-ները ձեռք են բերվել: ՄԿԱ-ների ձեռքբերման ապացույցը ստուգվում է Բանկի հետ համաձայնեցված Ստուգման ընթացակարգերի դրույթների համաձայն եւ հաստատվում է Անկախ ստուգող մարմնի (ԱՍՄ)-ի կողմից:

2. Չհակասելով սույն Բաժնի Բ. 1 (բ) մասի դրույթներին՝ Վարկառուն կարող է որպես կանխավճար առհանել քսանհինգ միլիոն հինգ հարյուր հազար եվրոյին (25,500,000 եվրո) համարժեք գումարը չգերազանցող գումար, սակայն պայմանով, որ եթե Բանկի կարծիքով՝ ՄԿԱ-ն (ՄԿԱ-ները) ձեռք չի (չեն) բերվում նախքան Ավարտի ամսաթիվը, ապա Վարկառուն այդ կանխավճարը վերադարձնում է Բանկին՝ Բանկի կողմից դրա մասին ծանուցվելուց անմիջապես հետո: Բացառությամբ այն դեպքերի, երբ Վարկառուի հետ այլ համաձայնություն ձեռք չի բերվել, Բանկը չեղարկում է այդ կերպ վերադարձված գումարները: Ցանկացած կատեգորիայի ներքո որպես կանխավճար պահանջվող հետագա առհանումները թույլատրվում են միայն այն ժամկետներով եւ պայմաններով, որոնք Բանկը կսահմանի՝ Վարկառուին ծանուցում ուղարկելով:

3. Ավարտի ամսաթիվը 2029 թվականի սեպտեմբերի 30-ն է:

ԱՌԴԻՐ 3

Հանձնառությամբ ստանձնված աստիճանական մարման ժամանակացույցը

Ստորել բերված աղյուսակում ներկայացվում են Վարկի մայր գումարի մարման ամսաթվերը եւ Վարկի ընդհանուր մայր գումարի տոկոսը, որը վճարման է ենթակա Մայր գումարի յուրաքանչյուր մարման ամսաթվին (վճարման մասնաբաժին):

Մայր գումարի մարման մակարդակ

Մայր գումարի վճարման ամսաթիվ	Վճարման մասնաբաժին
Յուրաքանչյուր հունվարի 15-ին եւ հուլիսի 15-ին Սկսած 2039 թվականի հուլիսի 15-ից՝ ներառյալ 2049 թվականի հունվարի 15-ը	5%

ՀԱՎԵԼՎԱԾ

Սահմանումները

1. «Հակակոռուպցիոն ուղեցույցներ» նշանակում է Ընդհանուր պայմանների Հավելվածի 6-րդ պարբերության նպատակներով 2012 թվականի փետրվարի 1-ի ««Ծրագրեր հանուն արդյունքների» ֆինանսավորման գործում խարդախության եւ կոռուպցիայի կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի մասին ուղեցույցներ»-ը՝ վերանայված 2015 թվականի հուլիսի 10-ին:

2. «Ելակետային ցուցանիշ» նշանակում է ցանկացած ՄԿԱ-ի առնչությամբ սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի IV.Ա.2 բաժնի աղյուսակում սահմանված համապատասխան թիվը կամ տոկոսը:

3. «Կատեգորիա» նշանակում է սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի IV.Ա.2 բաժնի աղյուսակում սահմանված կատեգորիան:

4. «Մասհանումների հետ կապված ցուցանիշ» կամ «ՄԿՑ» նշանակում է տվյալ Կատեգորիայի մասով նշված՝ Կատեգորիայի հետ կապված ցուցանիշը, որը սահմանված է սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի IV.Ա.2 բաժնի աղյուսակում:

5. «Մասհանումների հետ կապված արդյունք» կամ «ՄԿԱ» նշանակում է տվյալ Կատեգորիայի մասով նշված Կատեգորիայի ներքո սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի IV.Ա.2 բաժնի աղյուսակում նշված արդյունքը, որի ձեռքբերման հիման վրա՝ նշված արդյունքին հատկացված Վարկի գումարը կարող է առհանվել նշված IV բաժնի դրույթներին համապատասխան:

6. «Բանաձեւ» նշանակում է ՄԿԱ-ների դիմաց մասհանումները հաշվարկելու համար նախատեսված միջոցը, որը որոշված է Բանկի կողմից, սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի IV.Ա.2 բաժնի աղյուսակում:

7. «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» կամ վերջինիս «ԱԾԻԳ» հապավումը նշանակում է սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի 1.Ա.1(գ) բաժնում նշված գրասենյակը:

8. «ՊԳԱԿ» նշանակում է պետական գնումների անկախ կազմակերպությունը, որը պետք է ստեղծվի 5.1 ՄԿԱ-ի համաձայն՝ Առողջության համընդհանուր ապահովագրության ծրագիրը ղեկավարելու եւ առողջապահական ծառայություններ մատուցողների հետ պայմանագրեր կնքելու նպատակով՝ ի թիվս այլ գործառույթների:

9. «ԱՍՄ» կամ «Անկախ ստուգող մարմին» նշանակում է երրորդ կողմի կազմակերպությունը, որն ԱՆ-ի կողմից պետք է ներգրավվի Բանկին բավարարող տեխնիկական առաջադրանքի համաձայն՝ ՄԿԱ-ների եւ ՄԿՑ-ների անկախ ստուգման նպատակներով, ինչպես նկարագրված է սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի 1.Գ բաժնում:

10. «Ընդհանուր պայմաններ» նշանակում է 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի ՎԶՄԲ ֆինանսավորման ընդհանուր պայմաններ, «Ծրագրեր հանուն արդյունքների» ֆինանսավորում»-ը (վերջին անգամ վերանայվել է 2023 թվականի հուլիսի 15-ին):

11. «ՖՆ» նշանակում է Վարկառուի Ֆինանսների նախարարությունը կամ դրա ցանկացած իրավահաջորդ:

12. «ԱՆ» նշանակում է Վարկառուի Առողջապահության նախարարությունը կամ դրա ցանկացած իրավահաջորդ:

13. «ՈՎՀ-ներ» նշանակում է ոչ վարակիչ հիվանդություններ:

14. «ՍՄՀԿԾ» նշանակում է սեփական միջոցների հաշվին կատարվող ծախս:

15. «Մասնակցության մասին համաձայնագիր» նշանակում է սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի 1. Ա.2 բաժնում նշված համաձայնագիրը:

16. «Մասնակից տարածաշրջաններ» նշանակում է Ծրագրին մասնակցություն ունեցող տարածաշրջանները, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ համաձայնեցվել Բանկի եւ Վարկառուի միջեւ:

17. «Կատարողականի վրա հիմնված պայմանագիր» նշանակում է Պետական առողջապահական գործակալության եւ պետական կամ մասնավոր առողջապահական հաստատության միջեւ թիվ 1.1 եւ 1.2 ՄԿԱ-ների նպատակներով ստորագրված պայմանագիրը, իսկ «Կատարողականի վրա հիմնված պայմանագրեր» նշանակում է դրա հոգնակին:

18. «ԱԲՕ» նշանակում է առաջնային բժշկական օգնություն:

19. «ԱԲՕԿ-ներ» նշանակում է առաջնային բժշկական օգնության կենտրոններ:

20. «Նախնական արդյունք» նշանակում է 6.1 Կատեգորիայի ներքո ձեռք բերված արդյունք, որը սահմանված է սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի IV.Ա.2 բաժնի աղյուսակում եւ ընդունելի է համարվել Բանկի կողմից:

21. «Ծրագիր» նշանակում է սույն Համաձայնագրի 1-ին առդիրում նկարագրված գործողությունները, որոնք կազմում են «Վարկառուի առողջապահության զարգացման ազգային ռազմավարության» մեջ ներառված գործողությունների մի մասը, որը հաստատվել է Վարկառուի 2023 թվականի փետրվարի 9-ի թիվ 174-Լ որոշման համաձայն:

22. «Ծրագրի գործողությունների պլան» նշանակում է 2024 թվականի մայիսի 21-ի ամսաթվով Վարկառուի գործողությունների պլանը, որը նշված է սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի I. Դ բաժնում, եւ որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Բանկի համաձայնությամբ:

23. «Ծրագրային ծախսեր» նշանակում է, ի թիվս այլնի, Ընդհանուր պայմանների 2.03 եւ 7.04 բաժինների նպատակներով՝ 1099, 1188, 1200, 1202, 1207 բյուջեի ծածկագրերով (կամ այսպիսի այլ ծածկագրերով կրած ծախսերը, որոնց մասին ժամանակ առ ժամանակ Բանկը կարող է ծանուցվել), 11006

գործողությամբ Վարկառուի կողմից կրած ծախսերը, ինչպես նաև Վարկային միջոցներից ֆինանսավորվող ծախսերը, սակայն բացառելով ցանկացած ծախս, որը կապված է Բացառված գործողությունների հետ:

24. «Ծրագրի գործառության ձեռնարկ» նշանակում է սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի 1.Բ բաժնում նշված ձեռնարկը:

25. «Ընտրված ՈՎՀ-ներ» նշանակում է 2.1 ՄԿԱ-ի առնչությամբ՝ էսենցիալ (առաջնային) հիպերտոնիա (Հիվանդությունների միջազգային դասակարգչի (ՀՄԴ) ծածկագիր 110), 2-րդ տիպի շաքարախտ (ՀՄԴ ծածկագիր E11), թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություն (ՀՄԴ ծածկագիր J44), իսկ 3.1 եւ 3.3 ՄԿԱ-ների առնչությամբ՝ էսենցիալ (առաջնային) հիպերտոնիա (ՀՄԴ ծածկագիր 110), կրծքահեղձուկ (ՀՄԴ ծածկագիր I20), սրտային անբավարարություն (ՀՄԴ ծածկագիր I50) եւ թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություն (ՀՄԴ ծածկագիր J44):

26. «Ստորագրման ամսաթիվ» նշանակում է Վարկառուի եւ Բանկի կողմից սույն Համաձայնագիրը ստորագրելու երկու ամսաթվերից վերջինը, եւ այդ սահմանումը վերաբերում է Ընդհանուր պայմաններում «Վարկային համաձայնագրի ամսաթիվ» արտահայտությանն արված բոլոր հղումներին:

27. «Պետական առողջապահական գործակալություն» կամ ՊԱԳ նշանակում է Վարկառուի Պետական առողջապահական գործակալությունը, որը Կառավարության թիվ 593 որոշման համաձայն հիմնվել է 1997 թվականի դեկտեմբերի 18-ին, կամ դրա որեւէ իրավահաջորդ:

28. «Տեխնիկական աշխատանքային խումբ» նշանակում է սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի 1.Ա.1(բ) բաժնի համաձայն ստեղծման ենթակա Վարկառուի խումբը:

29. «ԱՀԱ» նշանակում է առողջության համընդհանուր ապահովագրություն:

30. «Առողջության համընդհանուր ապահովագրության ծրագիր» կամ դրա՝ «ԱՀԱ Ծրագիր» հապավումը նշանակում է Վարկառուի առողջության

համընդհանուր ապահովագրության ծրագիրը, որը պետք է ստեղծվի՝ հաստատված միանման հիմնական արտոնությունների փաթեթի հիման վրա Հայաստանում թիրախային խմբերին առողջության ապահովագրություն տրամադրելու նպատակով:

31. «Ստուգման ընթացակարգեր» նշանակում է ընթացակարգեր, որոնցով սահմանվում են Բանկի հետ համաձայնեցված ՄԿԱ-ների ստուգման համար անհրաժեշտ գործողություններն ու մեխանիզմները՝ 2024 թվականի մայիսի 21-ի ամսաթվով, որոնք նշված են սույն Համաձայնագրի 2-րդ առդիրի 1.9 բաժնում: